

## ԱԹԵՆԻ ՍԻՈՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Աթենի Սիոն եկեղեցին VII դարի առավել երևելի պաշտամունքային կառույցներից է: Ներքուստ այն ծածկված է տարբեր ժամանակներում և այլևայլ թեմաներով կատարված որմնանկարներով, իսկ արտաքին ճակատները բավականաչափ հարուստ են քանդակագործական աշխատանքի նմուշներով: Եթե այս ամենին գումարենք վիմագիր ու դեղագիր արձանագրությունների առատությունը, ապա հասկանալի կդառնա այն ծավալվող հետաքրքրությունը, որ, մանավանդ վերջին տարիներս, ցուցաբերվում է այդ հուշարձանի նկատմամբ: Ճարտարապետության պատմաբանների, արվեստագետների, վիմագրագետների ու աղբյուրագետների համատեղ ջանքերի շնորհիվ երևան են բերվում նորանոր մանրամասներ, կատարվում են ուշագրավ դիտարկումներ:

Ընթացիկ աշխատանքներով թելադրված հողված-հրապարակումներին ղուգրնթաց սկսում են լույս տեսնել և մենագրական աշխատություններ: 1977 թ., օրինակ, հրատարակվեց Գ. Աբրամիշվիլու «Ստեփանոս մամփալի որմնանկարային արձանագրությունը Աթենի Սիոնում» գրքուկը (այն հեղինակի՝ Աթենի Սիոնին վերաբերող հինգերորդ հրապարակումն է), իսկ վերջերս լույս է տեսել Զ. Ալեքսիձեի «Աթենի Սիոնի հայերեն արձանագրությունները» մենագրությունը:

Եկեղեցու հայերեն արձանագրությունների նշանակալից մասը հրատարակված է<sup>1</sup>, բայց և երևան են գալիս նորերը: Զ. Ալեքսիձեի վերջերս լույս տեսած աշխատությամբ վերծանվել և շրջանառության մեջ են դրվել հիշատակագրային բնույթի մի քանի հայերեն արձանագրություններ, մակադրություններ ու հայատառ վարպետանշաններ: Այս հրատարակության փաստական նորույթներից ծանրակշիռն ու ծավալունը Երհասանա ուղու արձանագրությունն է, որի բովանդակած հաղորդումները առանձնակի կարևորություն ունեն թե՛ Աթենի Սիոնի և թե՛ X դարի վերջի վրաստանի պատմության համար: Արձանագրությունը վերծանված է.

Չայս Էս Գերգիում  
Երհասանա ուղի: Որ  
գայս կարդայ Ա(ստուծո)յ նկար-  
իչս [յիշեցէֆ]: Որ Բարգրատ Ալիսազա-  
ց թագաւորն տիկիւնի վրա-

<sup>1</sup> Լ. Մեյիքսեթ-Բեկ, VII դարու հայերեն արձանագրություններս վրաստանում (Աթենի Սիոն), ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 5, էջ 3—6:

ց ետ-արավ եւ գա... լտ Ուփ-  
լիցխէ կալաւ ոի (?)<sup>2</sup>:

Արձանագրութեան գրչական, հնագրական և լեզվական բնութագրու-  
թյունից հետո, հրատարակիչը ծանրանում է երկու հարցի վրա.

1. Այն թվագրելի է Բագրատ III Ափխազաց թագավորի գահակալու-  
թյան տարիներով՝ 978—1014 թթ., ավելի ստույգ նրա՝ Ուփլիսցիխեին տի-  
րանալու թվականների շրջանակով՝ 980—988 թթ., որի մասին պատմում է  
«Քարթլիի մատյանը» յ. Յ., 1, 274—277): 2. Ալեքսիսեն հակված է եղե-  
լությունը թվագրելու 982 թ. «մոտ ժամանակներով» (էջ 56): Ըստ հեղինա-  
կի՝ արձանագրությունը հավաստում է վրաց աղբյուրի հաղորդումը և լրա-  
ցումներ բովանդակում:

2. Վիմագրի «Աստուծոյ նկարիչս» արտահայտությունից հետևում է, թե  
Գերգիումը քանդակագործ է: «Ոչ մի կասկած չի կարող լինել,— գրում է  
հրատարակիչը,— որ Աթենի Սիոնի ճակատներին կա Գերգիում Երհասանի  
որդու քանդակած առնվազն գոնե մեկ քանդակ: Հետևաբար, Աթենի Սիոնի  
գեթ մեկ քանդակ 982—986 թվականներին է կատարված: Բավական է այս  
փաստն ընդունել, որ ստիպված լինենք նույն տարիներին կատարված ընդու-  
նել ֆանդակների ողջ խումբը, որոնց կատարյալ ռեալան նույնություներ որևէ  
կասկած չի հարուցում: Դրանց մեջ են հայերեն արձանագրություն ունեցող  
քոյուր ֆանդակները և նաև այն ֆանդակը, որի վրա նարտարապետ Թողոսակի  
(Թողոսա) ինքնագիրն է դրոշմված: Այսպիսով, վավերագրորեն հաստատվեց  
Գ. Աբրամիշվիլու կողմից Աթենի Սիոնի բազմակողմանի, հանգամանալի  
վերլուծության հետևանքով արտահայտած կարծիքը. X դարի 80-ական թվա-  
կաններին Աթենի Սիոնում նշանակալի վերանորոգչական աշխատանքներ են  
կատարվում, որոնց ժամանակ էլ քանդակագործների կողմից այն զարդար-  
վում է նոր քանդակներով: Վերականգնման և նորոգման աշխատանքները  
դեկավարում է ճարտարապետ և քանդակագործ Թողոսակը: Նրա օգնական-  
ներն են Գերգիում Երհասանի որդին, Գրիգոր Դապսը, Ահարոնը և Գիորգին:  
Իժվար է ասել, նրանք հրավիրված են Հայաստանից, թե Քարթլիում են  
ապրում ու գործում: Պարզ է սակայն, որ Երհասանի որդին մոտ է կանգ-  
նած վրաց իրականությանը...» (էջ 60—61):

Այս եզրակացությունները վերաբերում են շատ առումներով ուշագրավ  
խնդիրների և կարող են նորովի հետազոտության անկյունաքար դառնալ:  
Փաստորեն նոր թվագրություն են ստանում Աթենի Սիոնի հայերեն արձա-  
նագրությունները, հիմնարկող-շինող Թողոսակը տեղափոխվում է X դար և  
նորոգող-վերաշինող դառնում: Նրա գործակիցների մեջ հայտնվում է նոր  
անուն՝ Գերգիում Երհասանա որդի, որը, ըստ առկա վերծանության, հա-  
կանե-հանվանե կոչված է նկարիչ (ընդ որում՝ սա քանդակագործ նշանակող  
այդ տերմինի հնագույն գործածությունն է առ այսօր հայտնի վիմագրության  
մեջ) և այլն:

<sup>2</sup> Տե՛ս ՆՅՆՅ ՎԼԵՅՆՈՒՄԵ, ՎԵՅՆԻՍԻ ՍՈՒՆԻՍ ՍՈՄՆՅՈՒՆ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐԵՑԻ, տժ., 1978, թ. 51.  
Վերծանությունն ուղեկցվում է արձանագրության գրչականի ու լուսանկարի հրատարակմամբ  
(էջ 50 և աղ. 10), որոնք փաստում են այս կամ այն ընթերցումը, միաժամանակ վերաբարձ-  
ման հնարավորություն սալիս:

Հակառակ վստահություններ կատարված այս եզրահանգումներին: արձանագրության վերծանության մեջ կան վերանայելի ու վերապահելի կետեր, թյուրընկալումներ, որոնք օր առաջ պիտի ուղղվեն՝ նոր թյուրիմացությունների աղբյուր չգառնալու համար:

Տող 1: «Գերգիում» անվան բառամիջյան գ-ն նշանակալիորեն տարբեր է արձանագրության մեջ երեք անգամ հանգիպող գ-երից (հմմտ. նաև՝ Բարգրատ, թագաւորն): չկա աջակողմյան ելուստը, ստեղծի վարի ծայրը: թեքված է աջ, իսկ բուն ստեղծի թեքումը աջից ձախ բավականաչափ շեշտված է: Ըստ ամենայնի փորագրված է ոչ թե գ, այլ ջ, որով անունը դառնում է Կերջիում: Իհարկե, այս անունը նույնքան անծանոթ է, ինչպես Գերգիումը և, պիտի կարծել, սերում է նրանից (գ-ջ հնչյունափոխությամբ, հմմտ. Բրգնի-բ > Բրջնի > Բջնի):

Տող 3: «Ա(ստուծոյ) նկարիչս» արտահայտությունն առհասարակ անհասկանալի և միջնադարյան մտածողությանն անհարիւր մի բան է: Իմաստը կոահելի կլինեն, եթե ունենայինք «Աստուծով նկարիչս», բայց ոչ երբեք՝ «Աստուծոյ նկարիչս» (ԼժՅԻՍԻՍ ՄԵԾԵՃԱՅԵԾԵԼՈՒ, БОЖИЙ СКУЛЬПТОР): Եվ հիրավի, «Աստուծոյ» ունենալու դեպքում ԱՅ-ի վրա պատվի նշան կլինեն, որ չկա: Վերծանողը պարզապես տառաշարքի ճիշտ բառանջատում չի կատարել, ուստի կանգնել է նոր ու անկարելի բառակապակցություններ ստեղծելու փաստի առաջ: Եթե ենթադրյալ «նկարիչս» բառի ն-ն կարդար այդ «այ»-ի հետ, ապա «աստուծոյ» փոխարեն կունենայինք այն, իսկ սույն պարագան նրան հնարավորություն կտար իրարից տարբերակելու և և տ տառերը, և այլևս «Ա(ստուծոյ) նկարիչս» չէինք ունենա, այլ՝ «այն տարին»: Դրանում համոզվելու համար բավական էր «պարգայ», «տիկին» և «կալա» բառերի կ-ն համեմատության մեջ դնել ենթադրյալ «նկարիչս»-ի հետ: Արձանագրության կ-ին բնորոշ է երկու կիսաստեղծների շեշտված երկարացում, մինչդեռ «նկարիչ»-ի մեջ այդ չկա<sup>3</sup>:

Տող 4: Արդեն ասացինք, որ «նկարիչ» բառը մտացածին է, ուստի այս տողի երկրորդ տառանիշը՝ ն-ն, չ է կարդացված, իսկ նրա կիսաստեղծին հարող և բոլորգրի մեջ հաճախ հանդիպող հորիզոնական գծիկը գրչանկարներում նոր կեռ է ստացել և ս դարձել, մինչդեռ լուսանկարում ս հուշող կեռ չկա<sup>4</sup>:

Նույն տողի շարունակության մեջ վերծանողը փակագծերով մուծել է տեղում չգրված և թվացական իմաստով ենթադրվող յիշնցնի բառը, բոլորովին այլ շարադրանք ու բովանդակություն տալով բնագրին: Միջնադարյան վիմագրողը, իհարկե, կարող էր բառ մոռանալ, բայց ոչ երբեք «յիշնցնի»-ը, որ արձանագրություն հրապարակելու հիմնական նպատակն է: Եվ ապա,

<sup>3</sup> Այստեղ փորագրված է ճիշտ այնպիսի տ, ինչպիսին ունենք «Բարգրատ», «տիկին», «ևտ» բառերում: Առկա բոլոր տ-երին բնորոշ է երկգծից դուրս գալու հատկանիշ: Եթե վերծանողը «նկարիչ» գտնելու նախապաշարում չունենար, ապա բոլոր տ-երը կ պիտի կարդար, որով կստանար «Բարգալ», «կիկինի», «ևկ»: Ցավով ու զարմանքով պիտի նշել, որ տառաձևերի ցանկում (էջ 52, նկ. 15) ս-ի գոյություն չունեցող տարբերակներ են ստեղծված:

<sup>4</sup> Հնագրությանը ոչ լավածանոթ մեկը, եթե շատ ուղենար այդ գծիկի տակ գիր տեսնել, սպա միան և կարող էր կարդալ, որպիսին իմաստագուրկ է: Առհասարակ բոլորգիր շ-ն որևէ կցապրություն չհանդուրժող տառերից է: Տողերիս հեղինակին գոնե միջնադարյան որևէ գրություն հայտնի չէ, որ շ-ի ստորին կեռին ս կցազրվեր:

վիմագրի իմաստը որոշակի դարձնելու համար վերծանողը իրավասու է ավելացում կատարել, բայց գերադասելի է՝ թարգմանության կամ մեկնաբանության մեջ և ոչ բնագրում: Ընդ որում՝ միջարկված բառը պիտի ենթադրվի իրական բովանդակությամբ և թվով ու դեմքով համապատասխանի կապակցությունը: «Որ զայս կարդայ» կապակցությունը եզակի թվով դրված հասցեատեր ունի (այլապես «կարդայք» կլիներ), ուստի «յիշեցէք»-ի փոխարեն հավելումը «յիշէ» պիտի լիներ: Արձանագրությունից երևում է, որ նրա հեղինակը հայցական հոլովին ու զ նախդիրին լավածանոթ է (հմտ. զայս-ի կրկին դործածությունը), հետևաբար նա կիմանար նաև, որ «նկարիչը» հայցականով է դրված և զ նախդիր է պահանջում («զնկարիչս յիշէ»): Այս բոլոր անհարթությունները «նկարիչ» տեսնելու ցանկությամբ են կյանքի կոչված: Եվ ապա՝ արձանագրությունն սկսվում է «Ձայս ես՝ Գերջիում...» մատնացուցումով, որից հետևում է, թե նպատակը «այս ես եմ» ասելը չէ, այլ՝ որ այդ անողը, կատարողը ինքն է՝ Գերջիումը: Հայցական հոլովի գործածությունը (զայս) ուղիղ խնդրի առկայությունն է ապացուցում, որը կրում է հեղինակի գործողությունը: Եվ քանի որ նա գրում է, հիշատակագրում և ոչ նկարում կամ ֆանդակում, ապա սպասելի ստորոգյալը կարող էր լինել միայն «գրեցի» (կամ՝ գրեմ): «Ձայս ես... յիշեցէք»-ը կոտնահարեր լեզվի ու տրամաբանության նվազագույն պահանջները:

Տող 6: «Ետ արավ» դարձվածը ճիշտ է ընթերցված, բայց՝ սխալ ընկալված: Այն տալ-առնուլ բայերի անցյալ կատարյալը չէ (իմա՝ տվեց-առավ), ինչպես թվացել է վերծանողին, այլ հարադրությամբ կազմված դարձված՝ ետ անել, որ այսօր էլ գործածական է հայերենում: «Ետ անել», «ետ կենալ» և «ետ լինել» նշանակում է խախտել որևէ պայմանավորվածություն, դրժել որևէ խոստում, չկատարել որևէ ուխտ<sup>5</sup>: Բագրատը ետ է արել մորը՝ Գուրանդուխտ թագուհուն, ասել է՝ ստիպել է խախտել նրա պայմանավորվածությունը Քարթլիի համախոհ ազնվականության հետ: Նտ առավ չի նշանակում ո՛չ ցցցցց (վիճել, վիճարկել, գանգատվել, բողոքել), ո՛չ էլ поспорился (էջ 113) կամ՝ quarrelled (էջ 123): Ընդ սմին՝ այդպես չպետք է հասկացվեր նույնիսկ տալ-առնուլ ունենալու դեպքում, որովհետև այն փոխաբերական իմաստով պիտի գործածվեր և կնշանակեր խորհել, մտորել, ֆենարկել, ծանրութեք անել, արժարծել: Եվ ապա՝ վիճել կամ վիճարկել կարելի է որևէ մեկի հետ, ուրեմն բնագրում պիտի ունենայինք «ընդ տիկինի վրաց», որպիսին չկա: Եթե անցուդարձերի մեկնաբանության ժամանակ հրատարակիչը, այնուամենայնիվ, նշանակալի թյուրիմացությունների մեջ չի ընկել, ապա պատճառն այն է, որ Բագրատի և մոր առնչության այս դրվագի մասին պատմվում է «Քարթլիի մատյանում», և հարցը բավականաչափ ուսումնասիրված է:

Նույն 6-րդ տողում եւ գալ տառաշարքից հետո քարը կոտրված է, ուստի մեկ կամ երկու տառանիշ չի պահպանվել, իսկ հաջորդ նիշը, որ բառավերջինն է, հստակորեն կարդացվում է մ (հմտ. Գերջիում): Չգիտես ինչու վերծանողն այն փորձում է տ կարդալ, թեև այդ նիշի հետ ոչինչ ընդհանուր

<sup>5</sup> Հարսնացուին կամ հարսին ետ են անում՝ հակառակ պայմանավորվածության, առուձախի պայմանագրությունից ետ են լինում և այլն:

ԳՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ

ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ  
 ԿՆՄԻՆԱԿԱԿ  
 ՄԻՆԻՆԱԿԱԿ

չունի, և ինքն էլ չի ժխտում մ-ի առկայությունը: Ասպակողմնորոշումն սկսվել է այն բանից, որ գալ... մ կապակցության մեջ Զ. Ալեքսիձեն հակված է եղել Ուփլիցիսիսին վերաբերող որոշիչ տեսնել, որպիսին նա «փոքր հավանականությամբ» համարում է գահանիսու բառը (էջ 54): Վնասվածքից առաջ պահպանված լ (կամ՝ ր) տառը նա հնարավոր է դիտում Ե կամ Կ կարգալ, թեև անխաթար պահպանվել է ստորին աջաթեք գծիկը: Որոշիչ փնտրելու ձգտումը վերծանողին զրկել է եղած նիշերը ճիշտ կարգալու և պահպանվածը վերականգնելու հնարավորությունից: Լ-ի և մ-ի արանքում, ինչպես ասացինք, զետեղելի է 1—2 նիշ: Վիճաբողը նիշերը հստակորեն տարանջատում է իրարից՝ միշտ որոշ բացակ թողնելով: Այստեղ էլ նման տարածություն պահելուց հետո կարելի է մեկ լայնանիստ բոլորգիր տառանիշ տեղավորել: Քանի որ գալ-ը արդեն ամբողջական միավոր է, առկա մ-ն իմաստավորելու առավել հավանական մեկ միավորը ա-ն կամ ու-ն է (իմա՝ ամ կամ ում): Հազիվ թե կարելի լինի «եւ գալում Ուփլիցիսէ» ենթադրել, թեև, հակառակ բերականական անհարթության, իմաստը գայթակղիչ է: Կարծում ենք, առավել հավանական է ա վերականգնել «եւ գալ [ա]մ Ուփլիցիսէ կալաւ»: «Գալ ամ», «գալ տարի» դարձվածը, ինչպես «ետ անելը», այսօր էլ գործածական է, մանավանդ արևմտահայ բարբառներում<sup>6</sup>:

Տող 7: Տպագրված լուսանկարի մեջ կալաւ-ից հետո երկկետ է երևում: Պարզ չէ վերջին ու կամ ոի տառաշարքի ինչ լինելը: Թերևս ասելիքը կիսավարտ է մնացել, որ արձանագրություններում հազվադեպ չէ:

Ի մի բերելով թվարկված սրբագրություններն ու ճշգրտումները՝ արձանագրությունը կարդացվում է այսպես.

Զայս ես՝ Գերջիում  
Երևասանա որդի: Ու  
գայս կարդայ այն տար-  
ին, որ Բարգրատ Ափխազա-  
ց թագաւորն տիկինի Վրաց  
ետ արաւլ եւ գալ [ա]մ Ուփ-  
լիցիսէ կալաւ, որ...

Արձանագրության թվագրությունը որևէ դժվարություն չի ներկայացնում, և այդ հաջողությամբ արված է հրատարակչի կողմից: 978 թ. Ափխազքի թագավորությունն ստանձնած Բագրատը երկու տարի հատկացնում է նախապատրաստությանը և ապա գործի զլուխ անցնում՝ նմանվելով պապին և մանավանդ Դավիթ Կյուրոպաղատին, որ և «սնուցանէր զմանուկն Բագրատ»<sup>7</sup>: «Քարթլիի մատյանի» տեղեկությամբ Բագրատը «այնուհետև անցավ եկավ Քարթլի, որպեսզի կարգավորի Քարթլիի բարձիթողի գործերը: Եկավ ու կայանեց Թիղվիում: Իսկ այն ժամանակ Քարթլիի ազնաւորներից ոմանք չէին կամենում նրա գալուստը, քանի որ իրենք ինքյան էին վարում Քարթլիի գործերը՝ թեև Գուրանդուխտի հնազանդության մեջ էին: [Նրանք] առաջնորդ

<sup>6</sup> Թեական է միայն, թե մեկ ոչ ծավալուն բնագրի մեջ ամ և տարի հոմանիշները կարող էին միաժամանակ գործածվել: Այդպիսի օրինակներ կարելի է գտնել, բայց դրանով անվերջապահություն չի ապահովվում:

<sup>7</sup> ქართლის ცხოვრების ძველი სომხური თარგმანი. თბ., 1953, էջ 219.

դարձրին Քավթար թբելուն և կովով դիմավորեցին Մողլիսի ծայրին: Երբ տեսավ Բագրատ Ափխազաց թագավորը՝ կոչեց իր բանակը, գնացին ու մարտեցին: Քարթլցիները փախուստի մատնվեցին. ոմանք կոտորվեցին, ոմանք բռնվեցին, իսկ մյուսները՝ դարձյալ փախստական զերծան և ցրվեցին: [Բագրատը] եկավ Ուփլիսցիսե, վերցրեց բերդը իր մորից, օրեր մնաց և սակավ մի խնամեց Քարթլիի գործերը: Տարավ իր մորն ու գնաց Ափխազքի երկիր...»<sup>8</sup>: «Մի քանի տարի անց»<sup>9</sup>, իսկ Ասողիկի ստուգապատում տեղեկությամբ՝ 988 թ.<sup>10</sup>, Բագրատին հաջողվում է դուրս գալ Դավիթ Կյուրոպաղատի և նրան աջակից հայոց Սմբատ թագավորի, Կարուց Աբաս նորընծայի, Սյունաց ու Աղվանից իշխանների, ինչպես նաև Բագրատ II Ռեզվենի՝ իր դեմ ստեղծված դաշնագրությունից և հարվածն ուղղել Ռատ Երիսթավի դեմ, որին պատկանում էր Աթենի բերդը, ուր և մեղ հետաքրքրող արձանագրությունն է հրապարակված<sup>11</sup>: Ինքնին պարզ է, որ Ուփլիսցիսեի գրավումը տեղի է ունեցել 980 թ. հետո և 988 թ. առաջ: Գերջիում Երհասանի որդու արձանագրությունը գրված է ճիշտ այդ ժամանակահատվածում, ուստի նրա հեղինակը խոսում է Ուփլիսցիսեի գրավման մասին, իսկ Կլդեկարիի ու Աթենի հետ կապված անցուդարձերին դեռ ծանոթ չէ: Դա այն շրջանն է, երբ Բագրատը դեռ երևան չէր բերել և խնամքով թաքցնում էր կենտրոնախույս ուժերից ամենագորեղի՝ Ռատ Երիսթավի ու նրա Լիպարիտ որդու դեմ դուրս գալու մտադրությունը:

Արձանագրության բերած նորությունը, ինչպես ասվեց, Ուփլիսցիսեին տիրանալու հիշատակությունը չէ (թեև դա ինքնին կարևոր է աղբյուրագիտական առումով), այլ՝ այդ իսկ դեպքի հետ կապված որոշ մանրամասների վկայումբ:

«Տիկինի վրաց ետ աբավ» արտահայտությամբ Գերջիումը որոշակի ակնարկում է Գուրանդուխտի հարելը «ազնվականներից ոմանց» մտադրությանը: «Քարթլիի մատյանի» այն հաղորդումը, թե այդ ազնաուրները «իրենք ինքյան էին վարում Քարթլիի գործերը՝ թեև Գուրանդուխտի հնազանդության մեջ էին» այժմ առավել հստակ ու ընկալելի է դառնում. ընդդիմությունը, նույնիսկ Մողլիսի մոտ կայացած մարտը, տեղի են ունեցել Բագրատի մոր՝ Գուրանդուխտի գիտությամբ ու համախոհությամբ<sup>12</sup>: Շենց այն պարագան,

<sup>8</sup> Է. Ս., I, էջ 270.

<sup>9</sup> նույն տեղում:

<sup>10</sup> «Ստեփանոս Տարոնեցու Ասողկան Պատմության տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 252—253:

<sup>11</sup> Նդեկությունների հանգամանալից գնահատությունը տե՛ս օջ. Ջ ա ջ ա Ն օ Մ Յ օ լ օ ի, յառտջ. Գրոս օՆՊ, II. տձ., 1965. էջ 125—127, հմտ. Ս. Տ. Երեմյան, Լիպարիտ Զորավարը և նրա նախորդները, Ե. Մառի անվան կարինետի «Աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 113.—115:

<sup>12</sup> «Քարթլիի մատյանի» ճառագող օգտոյս Մոհիլեղծձա Մոնա ցըրանդեքտիսա (Է. Ս. I, 276) նախադասությունը երկի վերջերս յուշա տեսած ուսուերն թարգմանության մեջ ստույգ չի փոխանցված՝ «и сря? да подчинились они воле Гурандухт» (տե՛ս «Матнине Карглиц», перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Тбилиси, 1976, էջ 39): ճառագող-ն նույնն է, ինչ ճառագող-ն («թեև», «թեպետև», նոր վրացերեն՝ տղմ-Յա. յառագող (տղմ), մինչդեռ ընկալվել է իրրև ճա տղ-ճա, ուստի այնպես է դուրս եկել, թե ազնաուրները չէին ենթարկվում թագուհուն և հակառակ նրա կամքի էին դիմագրավում Բագրատին: Վկայությունը այդպես է մեկնաբանել նաև Զ. Այերսիձեն, որի ուղղակի հայտարարությամբ՝ «երկիրը կառավարում է Գուրանդուխտ թագուհին: Սակայն Քարթլիի ազնաուրները երան չեն հնազանդվում» (էջ 56):

որ մանրամասները երևան չբերելու միտում ունեցող անանուն հեղինակը (Լեոնտի Մրովելին?) Ուփլիսցիխեի մասին խոսելիս գործածում է «*ճոլոլո* լոնց ըջընսաջաժ տշևոնս», արտահայտությունը («վերցրեց բերդը իր մորից»), ուր *ճոլոլո*-ն հարկադրանք է բովանդակում, արդեն վկայություն է, թե «վրաց տիկինը» կամավոր գիջում չի կատարել: Գերջիումի արձանագրությունը գալիս է հաստատելու մոր և որդու տարբեր բանակներում գտնվելու և տարբեր քաղաքականություն վարելու իրողությունը: Իվ. Զավախիշվիլին արդարացիորեն շեշտը դրել է ազնվականության դիմադրության վրա, բայց չի անդրադարձել Գոսրանդուխտի դիրքորոշմանը, ուստի հետագա պատմաբաններից շատերին թվացել է, թե Բագրատը մորից ընդունել-ստացել է Ուփլիսցիխեն<sup>13</sup>: Գերջիումի արձանագրությունը իրադարձությանը լավածանոթ ժամանակակցի վկայություն է, ուր հստակորեն ասված է «Ուփլիցխէ կալաւ»: Համոզված չենք, թե «ետ արավ» և «կալաւ» ասելով բնագրի հեղինակը, այնուամենայնիվ, «կոնֆլիկտի մեջ զենքի գործածություն չի ենթադրում», ինչպես կարծում է Զ. Ալեքսիձեն: Բագրատի «Թիղվիում կանգնելը», «իր բանակը կանչելն» ու «Մողլիսի ծայրին մարտելը», ուր «քարթլցիները փախուստի մատնվեցին. ոմանք կոտորվեցին, ոմանք բռնվեցին, իսկ մյուսները՝ դարձյալ փախստական զերծան և ցրվեցին», թե՛ սուր կոնֆլիկտ է նշանակում և թե՛ «զենքի գործածություն»: Համախոհ ազնվականության պարտությանը ականատես «վրաց տիկինը» ուրիշ ելք չուներ, քան՝ որդու կամքին ապավինելը: Վերադառնալիս «իր մորը տանելը» ինքնին ապացույց է, թե Բագրատը դրանով հաղթահարում էր Վրաստանի միավորման ճանապարհին ծառայած մի կարևոր դժվարություն, իրեն ապահովելով ապագա հնարավոր ընդդիմություններից:

Ելնելով «գալ ամ» (հաջորդ տարի) արտահայտությունից, կարելի էր ենթադրել, թե Բագրատը ոչ թե «օրեր», այլ մի տարի է Քարթլիում մնացել կամ հաջորդ տարին վերստին է եկել՝ վերջնականապես տիրանալու Ուփլիսցիխեին: Սակայն «գալ ամ» ընթերցման և վերականգնման պայմանականությունը վստահ քննության հիմք չի տալիս:

Այսպիսով, 980—988 թթ. միջոցին գրված Գերջիումի հայերեն արձանագրությունը հիրավի կարևոր հաղորդում է բովանդակում՝ լրացնելով ու մասնավորեցնելով «Քարթլիի մատյանի» և Ասողիկի վկայությունները Բագրատ III-ի վարած զինական գործողությունների մասին՝ միավորյալ Վրաստան ստեղծելու պայքարի առաջին փուլում: Բայց այդ նույն արձանագրությունը որևէ հիմք չի տալիս վերանայելու Աթենի հայերեն արձանագրությունների առկա թվագրությունը: Նրանով Աթենի Սիոնի նորոգման թվական նշտելը պարզապես թյուրիմացություն է, ինչպես որ հիմնագուրկ է և ֆանդակների նշանակալի մասի ստեղծման ժամանակը որոշելու կիրառված փորձը: Գերջիում Երեսասնի որդին ո՛չ նկարիչ է և ո՛չ էլ ֆանդակագործ, ուստի անհաջող վերծանության հիմքի վրա սուսջացած այդ եզրակացությունն պիտի վերանայվի ու մերժվի:

<sup>13</sup> Այդպես է կարծել, օրինակ, Ս. Տ. Երեմյանը (նշվ. աշխ., էջ 113), իսկ Մ. Լորթքիփանիձեն «Քարթլիի մատյանի» «ճոլոլո»-ն (վերցնել. առնել, «կայնուլ») թարգմանել է «принял» (ընդունել, ստանալ), որով բնագիրը խաթարվել է (նշվ. աշխ., էջ 39):



Սակայն դրանով պատմական հիշատակարանի կարևորությունը չի նվազում: Այն կենդանի վկայություն է Աթենում վաղուց ի վեր հաստատված հայերի առկայության՝ նաև X դարում: Գերջիումը պատահական այցելու չէ. անկախ նրա տեղացի կամ դրսեկ լինելուց, արձանագրություն հրապարակելու փաստը թույլ է տալիս կոահում անել, թե հեղինակը որոշակի հարաբերություն է ունեցել Սիոնում դործող հողերականության, տեղի հայկական համայնքի, գուցե և Աթենի այն ժամանակվա տերերի՝ Լիպարիտյանների հետ: Միջնադարյան ոչ մի արձանագրություն պատահականորեն չի հայտնվում, մանավանդ երբ վիճարկվում է Լրկրի քաղաքական ու մշակութային կյանքում իր տեղն ունեցող բնակավայրի պաշտամունքային Լրևելի կառույցի պատին:

Գերջիում Երհասանի որդու արձանագրությունը նշանակալիորեն հարստացնում է միջին հայերենի ուսումնասիրության աղբյուրների թիվը, ժամանակագրական առումով զարմանալիորեն համընկնելով Միքայել Մոդրեկիլու Շարակնոցի (S—425, 978—988 թթ.) և Շատբերդյան նշանավոր ժողովածուի գրիչ Բերայ գրագրի հայերեն գրառումներին (S—1141, X դարի 70-ական թթ.), ինչպես նաև Դավիթ Կյուրոպաղատի հանձնարարությամբ հայերեն թարգմանված արաբական գրույցների (նույն թվականներ) լեզվական համասեռ նյութերին:

«Այն տարին», «տիկինի վրաց», «ես տարավ» և «գալ ամ» (?) քերականական ու բառադանձային-դարձվածաբանական նորությունները, «Գերջիում», «Բարգրատ» և «Ուփիցիսէ» անունների գրություններ, վ-ի և լ-ի զուգընթաց գործածությունը («արավ», «կայա»), ՚ չնշյունի արտասանության բացակայությունը սեռականում («Երհասանա որդի»), երբ հաջորդ տողում ունենք «կարդայ» և ուրիշ իրողություններ սույն արձանագրությանը առանձնակի կարևորություն են տալիս: Նրա հեղինակը, հակառակ հրատարակչի ենթադրության (էջ 60), հոգևոր դասի ներկայացուցիչ չէ, ուստի անձանթ է արձանագրություն կազմելու բանաձևերին, ինչպես որ հետո է գրոց լեզու գործածելու հնարավորությունից: Հենց այն փաստը, որ այստեղ բացակայում է աստծուն կամ Քրիստոսին փառք տալու կամ որևէ սրբի բարեխոսությունը դիմելու ավանդականությունը, իսկ հեղինակի անունն էլ Գերջիում է և ոչ տոնացուցային սովորական անուն՝ արդեն բավարար ապացույց է հոգևոր դասին չպատկանելու: Սիոնի վրացի վանականները հայերեն արձանագրություն կազմելու կամ կազմածը ըստ բանաձևի խմբագրելու հնարավորություն չունեին, ուստի Գերջիումը գրել է այնպես, ինչպես խոսել է և ասել՝ ինչ մտադիր է եղել հրապարակել: Ամենևին պատահական չէ, որ միջին հայերենի վաղ շրջանի աղբյուրները գերազանցապես ոչ զուտ ազգային միջավայրում են Լրևան գալիս: Ի վերջո, Գերջիումի արձանագրությունը բոլորգիր գրչության հնագույն նմուշներից է և հնագրական առումով ևս արժանի ուշադրության:

Անկախ վերծանության ու մեկնաբանությունների մեջ թույլ տված սխալներից, Ձ. Ալիքսիձեն օգտակար գործ է կատարել՝ առաջինը հրապարակելով այս վիճարկող հիշատակարանը:

## НОВОВЫЯВЛЕННАЯ АРМЯНСКАЯ НАДПИСЬ АТЕНСКОГО СИОНА

П. М. МУРАДЯН

(Резюме)

В связи с реставрационными работами Атенский храм становится предметом комплексного исследования историков архитектуры, искусствоведов и источниковедов. Как и следовало полагать, значительное место при этом отводится выявлению и интерпретации сохранившихся здесь разноязычных надписей. Среди новых текстов важной представляется армянская надпись 80-х годов X в., которая в чтении и переводе З. Алексидзе гласит: «*Это я, Гергиум, сын Эрхасана. Кто это прочтет, [да помянет] скульптора божьего. Когда царь абхазский Баграт поссорился с царицей Картли... занял Уплисцихе...*». На основании данного текста З. Алексидзе попытался датировать все рельефы памятника с армянскими надписями, а деятельность строителя Тодосака перенести на конец X в. Но палеографический анализ надписи показывает, что издатель допустил существенные неточности, приведшие его к выводам, не вытекающим из самой надписи. Из-за ошибочного словоделения выражение *ալի տարիս* «в то лето» понято как *ա(ստուծո)յ նշարիչ* «божий скульптор», а *եւ տարաւ* как «поссорился» (вм. «заставил отстать»).

Надпись содержит важные данные по политической истории Грузии и в действительности читается так: «*Сие [написал] я Герджиум, сын Эрхасана. Кто прочтет это—в то лето, когда царь абхазов Баграт заставил царицу грузинскую отстать [от сговора], а в следующий год занял Уплисцихе, дабы...*». Фактически автор надписи никакого отношения к рельефам Сиона не имеет, а также не является современником и сподвижником Тодосака и не сообщает «документальных данных» о времени «значительных реставрационных работ». Он—обыкновенный пилигрим-мирянин, но хорошо осведомленный в политическом характере событий Грузии конца X в.

В повторном чтении и интерпретации нуждаются почти все вновь публикуемые армянские надписи и граффити. В частности, надпись «на триумфальной арке северной апсиды» прочитана как «*Боже всесвятый, взываю к тебе за Соломона, грешного душой, написал недостойный Закария. ՐՇԿԵ (1162=1713/14)*». Содержание настоящей надписи искажено. При учете особенностей письма она читается: «*Написал я, сын слуги божьего Соломона Сигнахца, грешный и недостойный Закарэ. ՐՇԿԵ (1172=1723/24)*».